ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԳՐԵՆԱԿԱՆ ՊԻՏՈՒՅՔՆԵՐԻ ԵՎ ԳՐԱՍԵՆՅԱԿԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԳՆՄԱՆ

N ԱՄՄՔ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-17/2

ք. Մասիս

« 01 » փետրվարի 2017թ.

«Մասիսի քաղաքապետարանը», ի դեմս քաղաքապետ Դ. Համբարձումյանի, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա /այսուհետ՝ Գնորդ/, մի կողմից, և Ա/Ձ Արմեն Սարգսյանը (այսուհետ՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին հանձնել սույն պայմանագրի N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագրով նախատեսված գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր (այսուհետև՝ Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար:

2. Մատակարարման պայմանները

2.1 Վաճառողն Ապրանքը հասցնում է Գնորդին:

2.2 Ապրանքը մատակարարվում է սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված գնման ժամանակացույցին համապատասխան և ժամկետը սահմանվում է առնվազն երեսուն աշխատանքային օր, որի հաշվարկը կատարվում է սույն պայմանագիրը կնքելու օրվանից, բացառությամբ այն դեպքերի, երբ Վաճառողը համաձայնում է պայմանագիրը կատարել ավելի կարճ ժամկետում:

3. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ սույն պայմանագրի 1 կետում նշված տեխնիկական բնութագրերին չհամապատասխանող Ապրանք.

ա) Չընդունել Ապրանքը՝ իր հայեցողությամբ սահմանել անպատշաճ որակի Ապրանքը սույն պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու սույն պայմանագրի 7.3 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 7.2 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ սույն պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.4 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է սույն պայամանագիրը.

3.1.4.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) խախտվել է Ապրանքի մատակարարման ժամկետը,

3.1.5 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել սույն պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքների ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից սույն պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում իրականացնել վճարումները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին սույն պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ

ամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից պահանջել ընդունելու սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը: Վաղաժամկետ մատակարարված և Գնորդի կողմից ընդունված Ապրանքը հաշվարկվում է հաջորդ փուլում մատակարարման ենթակա Ապրանքի քանակի հաշվին:

3.3.5 Սույն պայմանագրի մինչև 25 տոկոսը կարող է իրականացվել գործակալության պայմանագիր կնքելու միջոցով: Գործակալության պայմանագրի կողմ չի կարող հանդիսանալ տվյալ ընթացակարգում հաղթող ճանաչված, սակայն պայմանագիր կնքելուց հրաժարված մասնակիցը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.3 Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.4 Հետ տանել Գնորդի կողմից սույն պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.5 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.6 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

3.4.7 Սույն Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.8 Սույն պայմանագրի կատարման (կանխավճարի) ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել պատվիրատուին:

4. Ապրանքի գինը և վճարման կարգը

4.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է՝ **794 450 (յոթ հարյուր իննսունչորս հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամ՝ որից 20.000 (քսան հազար) ՀՀ դրամը՝ Մասիսի ՔԿԱԳ-ի 2017թ.-ի ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցների հաշվին, իսկ 774 450 (յոթ հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր հիսուն) ՀՀ դրամը՝ Մասիսի քաղաքապետարանի 2017թ.-ի ծախսերի նախահաշվով նախատեսված միջոցների հաշվին:** Յուրաքանչյուր ապրանքատեսակի միավորի գինը սահմանված է սույն Պայմանագրի N2 հավելվածում: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Կանխավճարի մարումն իրականացվում է սույն պայմանագրով նախատեսված արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Յուրաքանչյուր դեպքում նվազեցվող (կանխավճարի մարվող) գումարի չափը որոշվում է պայմանագրի ընդհանուր գնի նկատմամբ վճարվող գումարի համամասնությամբ:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա N 3 հավելվածով՝ վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում, (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումը կատարվում է 20 բանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի համար վճարելու վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները բավարարում են:

5. Ապրանքի որակը և երաշխիքը

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համար:

5.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

5.2.1 Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել թերություններ, ապա Վաճառողը պարտավոր է իր հաշվին, Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

6. Ապրանքի հանձնումը և ընդունումը

6.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Վաճառողը՝ Ապրանքի հանձման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Գնորդին է ներկայացնում հանձնած Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

6.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրում նախատեսված միջոցները.

բ) վաճառողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից տասնօրյա ժամկետում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

7. Կողմերի պատասխանատվությունը

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում գանձվում է տույժ 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով, որը հաշվարկվում է օրացուցային օրերով՝ պայմանագրի չկատարված մասի գնի նկատմամբ:

7.3 Սույն պայմանագրի 1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.4 Սույն պայմանագրի 7.2 և 7.3 կետերով նախատեսված տույժը տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարներից:

7.5 Գնորդի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05%-ի չափով:

7.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Այլ պայմաններ

9.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2017թ. դեկտեմբերի 31-ը :

9.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների գնման դեպքում երաշխիքային ժամկետ է սահմանվում Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օրը:

9.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Վաճառողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու

համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.4 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի.

2) սույն պայմանագրով նախատեսված ապրանքի շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերում շուկայական գները կորոշվեն և դրանց փոփոխությունը կգնահատվի նախապես համաձայնեցնելով ՀՀ Ֆինանսների նախարարության հետ, որի վերաբերյալ կկնքվի լրացուցիչ համաձայնագիր:

Սույն պայմանագրում չի կարող կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքների ծավալների կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

9.5 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող և (կամ) Գնորդ) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են.

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է պատվիրատուի հետ պայմանագիր կնքած անձը:

9.6 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

9.7 Սույն պայմանագիրը կազմված է չորս էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի 1, 2, 3, 4 և 4.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

9.8 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

10. Կողմերի հասցեները բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
Մասիսի քաղաքապետարան	Ա/Ձ Արմեն Սարգսյան
ք.Մասիս Կենտր. Հրապարակ 4	ք. Մասիս ն/թ 23 շ., բն. 26
ՀՎՀՀ 03801428	ՀՎՀՀ 451333039
ՀՀ Ֆին. նախարարություն	<<Արարատբանկ>> ՓԲԸ
հ/հ 900432131036	հ/հ 1510025507550100
հ/հ 900432560028	
Դ. Համբարձումյան	Ա/Ձ Ա. Սարգսյան
(ստորագրությունը)	(ստորագրությունը)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 1
«01» փետրվարի 2017թ. կնքված
ԱՄՄՔ-ԲՀԱՀ-ԱՊՁԲ-17/2 գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի անվանումը՝ գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր

Հ/Հ	Ապրանքների անվանումները	Չափի միավորը	Քանակ	Տեխնիկական բնութագիրը, համառոտ նկարագիրը
1	2	3	4	5
1	Թուղթ Ա4	տուփ	176	Թուղթ A4 ֆորմատի: Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է Գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը 210x297մմ, միատակ և երկտակ թերթերի համար, սպիտակությունը ոչ պակաս քան 90%, խտությունը 80Գ/մ2: 'Double A' կամ համարժեք: ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին համաձայն ստանդարտի:Փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, փաթեթի քաշը՝ 2,5 կԳ:
2	Թուղթ Ա3	տուփ	15	Թուղթ A3 ֆորմատի: Չափերը 297x420 մմ, համաձայն ԳՕՍՏ 6656-76, ISO-9001 և ISO-14001 ստանդարտներին, սպիտակությունը ոչ պակաս քան 90%, խտությունը 80Գ/մ2, փաթեթավորված ֆիրմային թղթափաթեթով կամ տուփերով, յուրաքանչյուրում 500 թերթ, 'Double A' կամ համարժեք
3	Արագակար	հատ	200	Ստվարաթղթից, արագակարով
4	Թղթապանակ կապիչով	հատ	200	Ստվարաթղթից, կապով
5	Թղթապանակ ամրակով	հատ	25	Ամրացման մետաղյա 2 օղակով, լայնությունը 80մմ, A4 ֆորմատի
6	Ֆայլ	հատ	1000	Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 50 միկրոն, թափանցիկ, 100 հատանոց: 'Impulse' կամ համարժեք:
7	Կարիչ միջին	հատ	20	30 էջ կարելու համար, ասեղներ N 26/6 և 24/6, ծակման խորությունը 110մմ
8	Կարիչի ասեղ	տուփ	50	Գրասենյակային կարիչների N 10, 24/6, 26/6: Տուփի մեջ 1000 հատ
9	Նշումների թուղթ կպչուն	հատ	50	Թուղթ նշումների համար, կպչուն և գունավոր 76.2X101.6մմ տուփի մեջ 100 էջ
10	Սեղմակ փոքր	հատ	850	Լայնությունը 32մմ, տուփի մեջ 12 հատ
11	Սեղմակ մեծ	հատ	100	Լայնությունը 40մմ, տուփի մեջ 12 հատ
12	Ամրակ	տուփ	100	33մմ, երկաթյա, տուփի մեջ 100 հատ
13	Դակիչ	հատ	10	Երկաթյա, երկանցք, քանոնով, 30 էջի համար
14	Մկրատ	հատ	20	Գրասենյակային, 17սմ երկարությամբ, չժանգոտող պողպատից, պլաստմասե բռնակով
15	Սոսինձ	հատ	50	Չոր չափագրված, 22գ
16	Մատիտ	հատ	50	Գրաֆիտային, ռետինով, N 2 HB
17	Մատիտի սրիչ	հատ	50	Մատիտներ սրելու համար, բազմակի օգտագործման սայրով
18	Ռետին	հատ	50	Նախատեսված մատիտով գրվածքները անհետք մաքրելու համար, Pelikan կամ համարժեքը
19	Գրիչ ինքնահոս	հատ	200	Գնդիկավոր, 0.5 մմ ծայրով /տարբեր գույներ/
20	Գրիչ գելային	հատ	100	Գելային, 0.5 մմ ծայրով /տարբեր գույներ/
21	Թանաք կնիքի	հատ	20	30 մլ /կապույտ/
22	Թղթի դանակ	հատ	5	Գրասենյակային, մետաղյա, սայրի լայնությունը 9մմ
23	Քանոն	հատ	20	Պլաստմասե, երկկողմանի. 30 սմ երկարությամբ

24	Հաշվիչ մեքենա մեծ	հատ	10	Մեծ չափի, 12 նիշով, երկու սնուցման աղբյուրով, Citizen CT 912, Citizen SDC-888 կամ համարժեքը
25	Ուղղիչ գրիչ (շտրիխ)	հատ	50	Գրչատիպ, 12մլ, բազմակի օգտագործման
26	Օրացույց սեղանի	հատ	20	Նախատեսված տակդիրի համար,գունավոր
27	Օրացույց պատի	հատ	20	Պատին ամրացվող մասով, գունավոր տպագրությամբ, գրքատիպ, յուրաքանչյուր ամիսն առանձին էջի վրա
28	Նոթատետր	հատ	15	Նոթատետր նշումների համար՝ հաստ, ամուր կազմով

ԳՆՈՐԴ
Մասիսի քաղաքապետարան
ք.Մասիս Կենտր. Հրապարակ 4
ՀՎՀՀ 03801428
ՀՀ Ֆին. նախարարություն
հ/հ 900432131036
հ/հ 900432560028

Դ. Հովսեփյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Արմեն Սարգսյան
ք. Մասիս ն/թ 23 շ., բն. 26
ՀՎՀՀ 451333039
<<Արարատբանկ>> ՓԲԸ
հ/հ 1510025507550100

Ա/Ձ Ա. Սարգսյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված 2
«01» փետրվարի 2017թ. կնքված
ԱՄՄՔ-ԲԸԱՀ-ԱՊՁԲ-17/2 գնման պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/Հ	Ապրանքի			Նախատեսվում է գնել 01.02.2017թ. - 31.12.2017թ.								Ընդամենը	
	Անվանումը	Չափման միավորը	Միավորի գինը /հազար դրամ/	I եռամսյակ		II եռամսյակ		III եռամսյակ		IV եռամսյակ			
				քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը	քանակը	գինը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14
1	Թուղթ Ա4	տուփ	2400	44	105600	44	105600	44	105600	44	105600	176	422400
2	Թուղթ Ա3	տուփ	5000	3	15000	3	15000	3	15000	6	30000	15	75000
3	Արագակար	Հատ	70	50	3500	50	3500	50	3500	50	3500	200	14000
4	Թղթապանակ կապիչով	Հատ	70	50	3500	50	3500	50	3500	50	3500	200	14000
5	Թղթապանակ ամրակով	Հատ	800	6	4800	6	4800	6	4800	7	5600	25	20000
6	Ֆայլ	Հատ	7	250	1750	250	1750	250	1750	250	1750	1000	7000
7	Կարիչ միջին	Հատ	950	5	4750	5	4750	5	4750	5	4750	20	19000
8	Կարիչի ասեղ	Տուփ	120	12	1440	12	1440	12	1440	14	1680	50	6000
9	Նշումների թուղթ կպչուն	Հատ	200	15	3000	12	2400	12	2400	11	2200	50	10000
10	Մեղմակ փոքր	Հատ	30	213	6390	213	6390	212	6360	212	6360	850	25500
11	Մեղմակ մեծ	Հատ	70	25	1750	25	1750	25	1750	25	1750	100	7000
12	Ամրակ	Տուփ	130	25	3250	25	3250	25	3250	25	3250	100	13000
13	Դակիչ	Հատ	1600	2	3200	4	6400	3	4800	1	1600	10	16000
14	Մկրատ	Հատ	350	5	1750	5	1750	7	2450	3	1050	20	7000
15	Սոսինձ	Հատ	300	12	3600	14	4200	12	3600	12	3600	50	15000
16	Մատիտ	Հատ	50	10	500	30	1500	10	500	0	0	50	2500
17	Մատիտի սրիչ	Հատ	130	12	1560	12	1560	13	1690	13	1690	50	6500
18	Ռետին	Հատ	80	12	960	12	960	12	960	14	1120	50	4000
19	Գրիչ ինքնահոս	Հատ	100	50	5000	50	5000	50	5000	50	5000	200	20000
20	Գրիչ գելային	Հատ	150	25	3750	25	3750	25	3750	25	3750	100	15000
21	Թանաք կնիքի	Հատ	300	5	1500	5	1500	5	1500	5	1500	20	6000
22	Թղթի դանակ	Հատ	350	1	350	1	350	1	350	2	700	5	1750
23	Քանոն	Հատ	60	5	300	5	300	5	300	5	300	20	1200
24	Հաշվիչ մեքենա մեծ	Հատ	2400	5	12000	2	4800	3	7200	0	0	10	24000
25	Ուղղիչ գրիչ (շտրիխ)	Հատ	200	12	2400	12	2400	12	2400	14	2800	50	10000
26	Օրացույց սեղանի	Հատ	800	5	4000	5	4000	5	4000	5	4000	20	16000
27	Օրացույց պատի	Հատ	80	5	400	5	400	5	400	5	400	20	1600
28	Նոթատետր	Հատ	1000	3	3000	8	8000	4	4000	0	0	15	15000
Ընդամենը				199 000		201 000		197 000		197 450		794 450	

ԳՆՈՐԴ
Մասիսի քաղաքապետարան
ք.Մասիս Կենտր. Հրապարակ 4
ՀՎՀՀ 03801428
ՀՀ Ֆին. նախարարություն
հ/հ 900432131036
հ/հ 900432560028

Դ. Համբարձումյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Արմեն Սարգսյան
ք. Մասիս ն/թ 23 շ., բն. 26
ՀՎՀՀ 451333039
<<Արարատբանկ>> ՓԲԸ
հ/հ 1510025507550100

Ա/Ձ Ա. Սարգսյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

Հավելված 3
«01» փետրվարի 2017թ. կնքված
ԱՄՄՔ-ԲՀԱՀ-ԱՊՁԲ-17/2 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Նախատեսվում է ֆինանսավորել Մասիսի քաղաքապետարանի 2017թ.-ի բյուջեից

Հ/Հ	Անվանումը	I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ
1	2	3	4	5	6
1	Գրենական պիտույքներ և գրասենյակային նյութեր	100%	100%	100%	100%

ԳՆՈՐԴ
Մասիսի քաղաքապետարան
ք.Մասիս Կենտր. Հրապարակ 4
ՀՎՀՀ 03801428
ՀՀ Ֆին. նախարարություն
հ/հ 900432131036
հ/հ 900432560028

Դ. Հայրապետյան
(ստորագրությունը)
Կ.Տ.

ՎԱՃԱՌՈՂ
Ա/Ձ Արմեն Սարգսյան
ք. Մասիս ն/թ 23 շ., բն. 26
ՀՎՀՀ 451333039
<<Արարատբանկ>> ՓԲԸ
հ/հ 1510025507550100

Ա/Ձ Ա. Սարգսյան
(ստորագրությունը)
Կ.Տ.